ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2018 թ. N 763-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 112-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 21-ի «Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի, նախարարությունների և տարածքային կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 29-ի N 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

8.	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	64	3	

».

2) «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Ընդամենը	***1901.5***	***38***	***3***

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ